

Dominicusmesse genommen und diese in eine Basiliusmesse umgestaltet. Wir stellen hier zum Vergleich die beiden Messen aus der Hs F nebeneinander:

Hs F. fol. 318b

Hs F. fol. 422b

ԿԱՆՈՆ ԵՐԱՆՆԵԼՈՅՆ ԴՕ-ՄԻՆԻԿՈՍԻ ԵՆՈՍՏՈՎԱՆՈՂԻ ԵՆՈՂԻ ԵՎ ԿԱՐԳԵՍ ՔԱՐՈՂԱՅՆ

ԿԱՆՈՆ ԵՐԱՆՆԵԼՈՅՆ �ԱՐՄԵԼԻՈՍԻ ԵՆՈՍՏՈՎԱՆՈՂԻ ԵՆՈՂԻ ՔԱՂԱՅՆԱՅՆԱՊԵՏԻՆ

Ժամամուտ. Ի մէջ եկեղեցոյ երաց զերբան նորա եւ լցոյց զնայ Տէր Հոգով իմաստութեան եւ Հանձարոյ, եւ Հանդերձ փառաց զգեցոյց նմա:

Ժամամուտ. Ի մէջ եկեղեցոյ երաց զերբան նորա եւ լցոյց զնայ Տէր Հոգով իմաստութեան եւ Հանձարոյ, եւ Հանդերձ փառաց զգեցոյց նմա:

Փոխ. Բարբէ է խոստովան լինել Տեառն եւ սաղմոս առել անուան քում, բարձրեալ:

Փոխ. Բարբէ է խոստովան լինել Տեառն եւ սաղմոս առել անուան քում, բարձրեալ:

Աղօթք. Աստուած մեր, որ կամեցար լուսաւորել զեկեղեցիք զո քարոզութեամբ եւ օրինակաւ վարուց երանելոյն Դոմինիկոսի խոստովանողին քո փանդին քո, աղօթիւք նորա պարզեւեալ նոյն եկեղեցոյ քում սրբոյ յայտ յախտեանս աննուազ մնալ յաղթութեամբ, եւ ի Հոգեւորն առաւելու միշտ աճեցմամբ, տերամք, եւն:

Աղօթք. Աստուած մեր, որ կամեցար լուսաւորել զեկեղեցիք քո քարոզութեամբ եւ օրինակաւ վարուց երանելոյն Բարսեղիոսի խոստովանողին քո եւ քահանայապետին, աղօթիւք նորա պարզեւեալ նոյն եկեղեցոյ քում յախտեանս աննուազ մնալ յաղթութեամբ, եւ ի Հոգեւորն առաւելու միշտ աճեցմամբ, տերամք, եւն:

Պօղոսի առաքելոյն ի Տիմօթեա Քրիստոսի է ընթերցուած.

Պօղոսի առաքելոյն ի Տիմօթեա Քրիստոսի է ընթերցուած.

Մերելիք, Ձայս վկայութիւն...

Մերելիք, Ձայս վկայութիւն...

Գիտ ի հասարակ խոստովանողացն:

Գիտ ի հասարակ խոստովանողաց քահանայապետիցն:

Մեսեղի. Բերան արդարոյն խոկայ զիմաստութիւն եւ լեզու նորա խօսեցի զերբանունս:

Մեսեղի. Բերան արդարոյն խոկայ զիմաստութիւն եւ լեզու նորա խօսեցի զերբանունս:

Փոխ. Աւրէնք Աստուծոյ նորա ի սիրտի (sic) իւրում եւ մի՛ վայթակղեացին զնայք նորա:

Փոխ. Աւրէնք Աստուծոյ նորա ի սրտի իւրում եւ մի՛ վայթակղեացին զնայք նորա:

Ալէլուիա:

Ալէլուիա:

Ո՛վ բարեգութ Հայր, երանելի Դոմինիկոս, զգործս քո յիշեա՛ եւ առաջի վեհադոյն դատաւորին վասն զնոյն քոց աղքատաց կանգնեալ աղաչեա՛:

Ո՛վ բարեգութ Հայր, երանելի Բարսեղիոս, զգործս քո յիշեա՛ եւ առաջի վեհադոյն դատաւորին վասն զնոյն քոց աղքատաց կանգնեալ աղաչեա՛:

(Hs F. fol. 318b)

(Hs F. fol. 422b)

Աւետարան, որ է ըստ Մարքոսի. Յայնժ ժամանակի սասց Յիսուս աշուղհերտաց իւրոց. զուրք էք աղ երկրի...

Աւետարան Մարքոսի. Յայնժ ժամանակի սասց Յիսուս աշակերտաց իւրոց. զուրք էք աղ երկրի...

Գիտ ի հասարակ խոստովանողացն:

Գիտ ի հասարակ խոստովանողաց քահանայապետիցն:

Մատուցումն. Չցանկութիւն սրտի նորա ետուր նմա եւ զկամս շրթանց նորա ոչ արդելեր ի նմանէ. եղեր ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ:

Մատուցումն. Չցանկութիւն սրտի նորա ետուր նմա եւ զկամս շրթանց նորա ոչ արդելեր ի նմանէ. եղեր, Տէր, ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ:

Ծածուկ աղօթք. Սըբրեա՛յ, Տէր, զնուէրքս մատուցեալ քեզ եւ արժանաւորութեամբ երանելոյն Դոմինիկոսի խոստովանողին քո, եղիցին մեզ յօգուս եւ ի բժշկութիւնս Հոգոց, տերամք, եւն:

Ծածուկ աղօթք. Սըբրեա՛յ, Տէր զնուէրքս մատուցեալ քեզ եւ արժանաւորութեամբ երանելոյն Բարսեղիոսի քահանայապետի քո եւ խոստովանողին, եղիցին մեզ յօգուս եւ ի բժշկութիւնս Հոգոց, տերամք մեր, եւն:

Հաղորդումն. Հաւատարիմ ծառա եւ իմաստուն, զոր կացոյց Տէր ի վերա ընդանեաց իւրոց, տալ նոցա ի ժամու զպէսան:

Հաղորդումն. Հաւատարիմ ծառա եւ իմաստուն, զոր կացոյց Տէր ի վերա ընդանեաց իւրոց, տալ նոցա ի ժամու զպէսան:

Յետ քաշակմանն. Աստուած ամենակարօղ, խընդրեմք ի քէն, պարզեւեալ մեզ, վասն զի ի մեղաց մերոց ծանրացեալ եմք մերձ յընկղմել, [fol. 319 b] զի օժանդակութեամբ երանելոյն Դոմինիկոսի, խոստովանողին քո, տին յարուցեալք կանգնեցուք, տերամք մերով, եւն:

Յետ քաշակմանն. Աստուած ամենակարօղ, խընդրեմք ի քէն, պարզեւեալ մեզ, վասն զի ի մեղաց մերոց ծանրացեալ եմք մերձ յընկղմել, զի օժանդակութեամբ երանելոյն Բարսեղիոսի խոստովանողին քո եւ քահանայապետին յարուցեալք կանգնեցուք, տերամք մերով, եւն:

ԿՈՒՏԻՆԵՆԵՑ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՊԻԹԻՆ

1922ին, երբ Կ. Պոլիսի մէջ կ'աւարդէր որ քեմալականներու ազդեցութեան տակ Կուտինայի հայ բնակչութեան պարպումով անոր ազգային պատմական յիշատակարաններն ալ փնացան, ծանօթ բանաւեր Արշակ Ալպոյանեան յայտնեց թէ օրինակ մը Կուտինայի ժամանակագրութիւն կը գտնուի Բերայի Տեղեկատու Դիւանին մէջ բերուած վախճանեալ վախրամ Արքեպ. Մանկունիի թոյգօնին հետ: Յիշեալ եկեղեցականը ժամանակին Կուտինա մեկնած է Գէորգ Գ. Կաթողիկոսին կրամանով ընդօրինակելու այդ ժամանակագրութիւնը, գոր մեծանուն հայրապետը իր Պրոսպի, ու նաեւ Կուտինայի, առաջնորդութեանը տեսած ու փափագած է օրինակ մը ունենալ անկէ: Ուրեմն մենք ընդհանրապէս կը պարտինք ասկա Մանկունի Արքեպ.ի արքեմամտութեանը, որով օրինակ մըն ալ այն ատեն վերապահած է իրեն. իսկ ես մասնաւորապէս կը պարտիմ Պր. Ալպոյանեանի բարեացակամութեանը. որով գլուխ հանեցի ներկայ վերընդօրինակութիւնը ամենօրեայ յանախումներով Դիւան:

Մանկունի Արքեպ.ի օրինակը կը բաղկանար 2 անկագմ տետրներէ, որոնց մէկը կը պարունակէր այս ժամանակագրութիւնը եւ «Յաղագս ջերմեռանդութեան» մը 89 էջերով: Թուղթը հասարակ էր եւ գիրը՝ նօտրգիր: Իւրաքանչիւր էջին տողերն էին 34, երկայնութիւնը 32 հարիւրորդամետր. իսկ լայնութիւնը՝ 24, որուն 5 հարիւրորդամետրը յատկացուած՝ լուսանցքի: Գրիչներ նշանակուած՝ Անտոն Երէց, տաղասաց Յարութիւն Երէց (մահուր լեզուով) եւ անծանօթներ:

Եւ որովհետեւ անոր բնագիրին սեպհականատէրն էր Կուտինայի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին, ձեռագիրին սկզբնամասն ալ «Այս է Կոնդակ» մակագիրով շատագովականն է Աստուածամօր կամ է յորդորակ յիշատակարանի, ինչպէս կը յիշուի: Անոր կը յաջորդէ նաև մը եւ դարձեալ Կոնդակ մը ու այսպէս յաջորդաբար մինչեւ որ այս կարգը կ'արուի:

Կուտինայի Մայր Տաճարին բնագիրը կը պահուէր իր գանձատունին մէջ՝ ամբողջ Կուտինահայութեան մէջ մեծ համբաւ վայելելով Գիւրքիւրքի թուրքերէն անունին տակ: Անով հետաքրքրուած են այնտեղ այցելուք,

ինչպէս եւ հեռակայ քննաւերներ, որոնցմէ է Մաղափա Արքեպ. Օրմանեանը, որ Առաջին Աշխարհամարտէն ետք իր «Ազգապատում»ը պատրաստելու ատեն տեղեկութիւններ փայած է անկէ թղթակցութիւններով: Անկէ վերջ, հակառակ ատեն մը Կուտինայի Առաջնորդարանին փարտուղարութիւնը վախրուս՝ ինծի իսկ զպատեցաւ տեսնելու զայն: Այնքան խիստ եւ գգուշաւոր էին գանձապահները: Եւ ասկայն վախրամ Արքեպ.ի օրինակը կը ծանօթացնէ որ ժամանակագրութիւնը պարունակող մատեանը ունեցած է 474 գրչագրուած էջեր:

Այս ժամանակագրութեան արժէքը կը կայանայ քանի մը կէտերու մէջ: Առաջին, ան կը պարունակէ հնագոյն յիշատակութիւնը Կ. Պոլիսի պատրիարքութեան առաջին գահակալին, Յովնակիմ Եպիսկոպոսի: Երկրորդ, ան սկսելով ՊՂԴ = 1445էն, աւելի քան Հորս դարերու (թէեւ 5 դար մինչեւ այսօր) դէպքերուն անբէկ հայելին է առաջնորդական թեմի մը, որ կը ներկայացնէ արեւմտեան փոքր-Ասիայի ամենաին գաղութներէն մէկը: Երրորդ, ան ցոյց կու տայ այդ գաղութայութեան գործածած լեզուն, յատկ անունները, զբաղումները, եւն, որոնք խիստ կարեւոր են պատմական ուսումնասիրութեան համար: Եւ հուսկ, չորրորդ, ան նոյն ատեն բաւական ընդարձակ տեղեկութիւններ կու տայ Հորս դարերու ընթացքին ժամանակակից Օսմանեան պետական անցողաբանութեան մասին: Այս բոլորը նշուած են բաւական խղճմտօրէն. միայն թէ դժբախտաբար կը պակսին Կուտինայի միւս եկեղեցիներուն, Ս. Թորոսի եւ Ս. Սարգիսի, ինչպէս եւ Կուտինահայութեան ազգային, առաջնորդական ու ներքին կեանքի մասին ընդարձակ ծանօթութիւններ:

Մանկունի Արքեպ.ի առաջին տետրին «Յաղագս ջերմեռանդութեան»ը կը պարունակէր հետեւեալ գլուխները.

- Գլուխ առաջին: (Յաղագս) Մտածական ազօրից ի խնդրոյ մանկանց յեկեղեցոյ:
- Գլուխ երկրորդ: Յաղագս նախապատրաստութեան:
- Գլուխ երրորդ: Յաղագս նիւթոյ եւ այլոց իրաց որք հարկաւոր են առ ի բարոյ առնել զմտածական ազօրսն:
- Գլուխ չորրորդ: Յաղագս այնոցիկ որք արգելուն զմարդն բարոյ մտածելոյ:

խաւարն կռապաշտութեան. քանզի սա է տա-
ճար Աստուծոյ կենդանոյ. եւ սա է հրեշտա-
կաց բնակարան. սա եպիսկոպոսաց փառք.
սա վարդապետաց պարծանք. սա թագաւո-
րաց պարիսպ. սա քահանայից յորդորիչ. սա
սարկաւազաց պահպանիչ. սա հաւատացելոց
յոյս. սա մեղուցելոց քաւարան. սա հիւան-
դաց բժիշկ. սա գլխերից կանգնուին. սա ան-
հաւատից կորուստ. սա թխաց հալածիչ. սա
արիւսաց հերքիչ. սա ուղափառաց հաստա-
տիչ. սա է տեղի աղօթից եւ պատարաճաց.
սա է հաստատեալ առաքելովք եւ ամբայեալ
մարգարէիք. սա պատկեալ հայրապետօք եւ
զարդարեալ մարտիրոսօք: Արդ պահեցէ
զսա տէր աստուած վէճ՝ անխախտելի հաս-
տատուն ի վերայ հիման առաքելոց եւ մար-
դարէից. երդ սաղմոսաց եւ ձայնք պաշտա-
մանց. բուցմունք կանգեղաց եւ բուրուին ա-
նուշահոտութեան խնկի. եւ զենուին անա-
բիւն գառնին ի սմանէ անպակաս եղիցի
ամէն:

Եւ զսպասուորք սորա զառաջինքն եւ
զվերջինքն եւ զպագայն պահեցէ իրբեւ.
զճահ անշիջանելի միշտ փայլել ի մէջ եկե-
ղեցոյ եւ արիացուցէ իրբեւ զհոգիք քաջ հո-
գուել եւ պահել զհօտս իւր սրբութեամբ եւ
արժանիարացէ ի միւսանգամ զալրտեանն,
պարզ երեսօք ասել թէ ահաւասիկ ես եւ ման-
կունք իմ զօր ետուր ցիս. եւ ննջեցեալքն որք
ընդ հոգանեալ սրբոյ տաճարիս են հանդու-
ցեալ ցոյն ողորմութեան ցողեաց ոսկերս
նոցա եւ բուսուցէ յօրն վերջին եւ երկինից
արքայութեանն արժանիս արացէ ամէն: Այլ
եւ շնորհօք սուրբ հոգւոյն զրեցաւ յորդո-
րակս յիշատակարանիս զի ի Յայտնութեան
եւ ի Յարութեանն անխափան կարգացեն-
զի ծանիցեն ամենեքեան թէ յոյժ են՝ որ յի-
շատակ են եղեալ. եւ զինչ է յիշատակն վասն
զի յուսոյ արքայութեան եւ աղօթից եւ պա-
տարագաց մասնակից լինին. քանզի մարգա-
րէն յեսայի արտաճառն ասելով երանի որ
ունիցի գաւակ ի Սիոն եւ ընտանիք յերու-
սաղէմ. Սիոն զեկեղեցի ասէ եւ յերուսաղէմ
զվերինն յերուսաղէմ նշանակէ: Այլ թէպէտ
մարդ ծնեալ ի մարդոյ յիշատակ է ծնողաց
յեկեղեցի Աստուծոյ յիշատակ են եղեալ նա
անջնջելի յիշատակ է եւ հանապաղ աղօթիցն
եւ պատարագացն մասն ունի. եւ որ գայ եւ
հարցանէ թէ զինչ է պակասութիւն եկեղեց-
ւոյս եւ ընդ զպակասութիւնն եւ ի նամակիս

զբուրի նա առան աստուած զրեցէ զանուն
նորա ի զպրութիւն կենաց եւ յցուցէ զպա-
կասութիւն հոգւոց եւ մարմնոց նոցա ամէն:
Եւ որք ի խորանիս կանգնեն աշխատելու են
եւ շինել նա փոխանակ այսմ ձեռագործ տա-
ճարիս. տացէ նոցա տէր աստուած զանձե-
ռագործ տաճարն եւ զխորանն լուսոյ ամէն:
Եւ որք զսեղանն Աստուծոյ զարդարելու են
սկով. խաչիւ եւ ծածկոցիւ եւ շուշապիւք.
նա բարձեալն ի վերայ սորա զարդարեցէ
զհոգի եւ զմարմինն նոցա ամէն: Եւ որ զբոյք
աստուածային պայծառացուցելու են զխորանս,
Աւետարանաւ, ձաւոցիւ, Մաշտոցիւ, Այսմա-
ւուրօք, Գանձատարիւ եւ այլ ամենայնիւ զոր
պիտոյ է եկեղեցոյս, որ կայ եւ որ մաշեալ
են եւ որ զեռ եւս տարոց են. զարդարեցէ
տէր Աստուած զհոգիս նոցա եւ զրեցէ զա-
նուն նոցա ի զպրութեան կենաց. ամէն:
Եւ որք զգեատիւ պատարագի, շուրջաօք,
չապիով, ուրարով, պագպ(ա)նոզով, վարչա-
մակով եւ գլխարկիւ, շուշապիւք. խաչիւ եւ
աւաղանի ծածկոցիւ եւ խորհրդանոցի ծած-
կոցիւ եւ նշխարհի ծածկոցիւ եւ այլ ամե-
նայնիւ զոր պիտոյ է եկեղեցոյս. որ կայ եւ
մաշեալ են. եւ որ զեռ եւս նախանձի եւ
հարցանէ թէ զինչ է պակասութիւնն եւ ընդ
զպակասութիւնն. նա ինքն պատարագն Քրիս-
տոս զրեցուցանէ նոցա զլուսեղէն զգեատն եւ
զանապական հանդերձն. ամէն: Եւ որք զտա-
ճարս Աստուծոյ զեկեղեցիացուցելու են, կանդե-
զօք, ձիթով եւ մոմով եւ ջահով եւ խնկով
եւ բուրբառով եւ այլ ամենայնիւ. նա փոխա-
նակ այսմ լուսատուածս եւ հոտոյ խնկոյս
տացէ նոցա զամբարս լուսեղէնս ըստ իմաս-
տուն կուսանացն եւ լուսովն աստուածային
լուսաւորեցէ զհոգիս նոցա եւ զհօտն ան-
մահութեան տացէ ի քիմս նոցա. ամէն:

Այլ եւ սկիզբն եղաք յիշատակարանիս
մեք զառաձեւալքս մեղօք, կոստանդին էրէցն.
ԺԲ տանուէրօք եւ ցանկացող եղաք այս
երկնահանգեալ տաճարիս. եւ լուաք զձայն
սոսկալի փրկչին որ ասէր թէ Պարտ էր քեզ
արկանել զարձաթն իմ ի սեղանաւորս եւ ես
եկեալ տոկոսիւք պահանջելի զիմն: Եւ մեք
ուժ առեալ զաղաջանս սուրբ Աստուածածնին
որ է մասն եկեղեցւոյս եւ օգնականութեամբ
մանկանց սուրբ եկեղեցւոյս զորձեցաք ժամ
մի ի յայգի Տեառն զի նա առասն է ի տուրս
բարեաց եւ զվերջինքս հեռ առաջնոցն հաւա-
գարակից արացէ. ամէն: Չեն արկաք ի
զորձ եւ ի մթեր ընչից մերոց եւ շինեցաք

զեկեղեցիս զայս անուն սուրբ Աստուածած-
նին յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց եւ ամե-
նայն արեան մերձաւորաց որ աղօթիցն եւ
պատարագացն մասնակից լինիմք. ամէն:
Այլ եւ հաստատեցաւ յիշատակարանս այս ի
թվին. ՊՂԳ (1444) ամին. ի հայրապետու-
թեան տեառն Կարապետին եւ յեպիսկոպո-
սութեան տեառն Ովակիմայ եւ երեսփոխա-
նութեան Յակոբին ի քահանայութեան եւ ի
սպասաւորութեան սուրբ Եկեղեցոյս Կիրակոս
Իրիցու. եւ Գրիգոր Իրիցու. եւ ի թագաւո-
րութեանն Տաճկաց Սալթան Մուրատի: Չի
անխափան կարգացեն եւ յիշեցեն զյիշա-
տակ սուրբացն եւ որ յիշէ յիշեալ լիցի ա-
ռաջի Աստուծոյ. ամէն:

Այլ եւ ժողովրդականք սուրբ Եկեղեց-
ւոյս երախտաւորք որք երախտիք ունին տրօք
եւ ողորմութեամբ ենայստքիկ:

Աստուած ողորմի կոստանդին էրէցն
ետուր զխորանին տեղն, զպախճային կէսն,
զժամատան տեղն, զխցին տեղն. ինչ որ ի
բակ զուսն սուրբ Աստուածածնոյ յիշատակ,
որ աղօթից եւ պատարագաց արժանի լինի.
ամէն. Աստուած ողորմի ասացէք:

Աստուած ողորմի վաճառական Վարդե-
րին հոգւոյն՝ ետ զպախճային կէսն, զտանն
տեղն, ի գերեզմանին տեղն. զարձեալ մէկ
արձաթէ լակի, մէկ աւետարան, Գ. կտոր
գեատն. Լ. օձ. նորա յիշատակն է:

Աստուած ողորմի Վարդան Իրիցուն եւ
ձորան Մուրադին հոգւոյն. ախոսն, վերայի
չարգախն նորա յիշատակ է:

Աստուած ողորմի. խոճա Իսկէնաէրին
հոգւոյն զԱստուածածնի հիմն պատեց:

Աստուած ողորմի. Կինէճի Ագաթին հո-
գուն, ժամատունն պատեց յիշատակ:

Աստուած ողորմի մահտեսի Ասըլպիկին
հոգուն, պախճային պատն պատեց յիշատակ:

Աստուած ողորմի Կոնցէ Դոսն հոգուն,
եւ. չ. սպիտակ:

Աստուած ողորմի զինէճախ Օժիտին հո-
գուն. ետ. Ա. աւետարան վերան արձաթէ
խաչ բեւեռած:

Որ ողորմի Քրիստոս Աստուած զայս յի-
շատակինն սուրբաց. եւ զրեցէ զանուանս
նոցա ի զպրութեան կենաց. եւս առաւել որ
աստ ժողովեալ հարց եւ եզրարց. մանաւանդ
մեղաւոր եւ անարժան գրչի Անտոն Իրիցուն,
հօրն տէր Ստեփաննոսին, մօրն Հովիթիմին
եւ այլ ամենայն արեան մերձաւորացն. ըն-
դկրցողիս եւ ընդաց եւ զողորմի ասողայ

քրիստոնէից. ողորմեա Քրիստոս Աստուած
մեր. ամէն:

Յարագս այրման եկեղեցեաց թէ ինչ
պատճառաւ այրեցաւ ահա առաջակայ քաղիս
գրեցոց եւ եղբարք:

Ճառ Ա. Արդ ի ժամանակս յետնս որով
նուազեցան ազգք քրիստոնէից եւ զօրացան
ազգքն տաճկաց ի կողմանս արեւելեան՝ Պար-
սիկք. եւ ի կողմանն արեւմտեան Օսմանցիք,
որք առին զբաղաքն ըմտամարտի ազգէն Հո-
սոմոց. ՋԲ. (1453) թուին Հայոց: Եւ ետ
առնելոյ Օսմանցւոյն զկոստանդինուպոլիս եւ
եւս մեծացան եւ զօրացան. եւ ձգեցաւ իշխա-
նութիւն նոցա յարեւելս կոյս եւ էհաս մին-
չեւ ի Թէրուզ. զէրէ Օսմանցոց փաշայք
նստին ի Թաւրէզ. եւ յերեւան, եւ ի Գան-
ջայ. եւ ի Շամախի. եւ ի Տէմիրդարուն. եւ
մինչեւ Խուզարիսն ունէին ընդ իշխանու-
թեամբն իւրեանց. նաեւ զՎրաց տունն աշ-
խարհ որ է Կոստանուստան ընդ ձեռամբ եւ
հարկատու էին արարեալ: Եւ ընդ երկուց
տիկերակալ թաղաւորացն այսինքն Օսման-
ցոց եւ ի Պարսից անհաշտ խռովութեանց ի
փախստեան եւ ի թաքստեան կային յախշտա-
կութեան եւ յաւարատութեան, ի գերութեան
եւ ի սպանութեան ի սոյլ եւ ի սուր եւ մա-
նաւանդ ողորմելի ազգս Հայոց: Չայս մի-
ջոցս եւ բազում ճշլալիք ձիւր եւ ցան արա-
բին. եւ զինչ երկարեցից եւ ի բազմաց ձե-
լայոց եկն աստ ի քաղաքս Քոթայիւ չար
եւ անորէն կարժիր զլուին բազում զօրք եւ
այրեաց զքաղաքն: Եւ ընդ նմին այրեցաւ.
Գ. եկեղեցին. ետոյ ողորմութեամբն Աստու-
ծոյ սկսան նորոգել վերստին: Ի թիւ. ՋԿԱ.
(1512) ստաջի ամի թագաւորութեանն տաճ-
կաց սուլթան Ալիմին:

Թվին ՌիՄ. (1572) ամին եկաւ մեծ սերն
զպաղչային պատն բոցոց. Աստուած օրհնէ
զքրիստոնեակցն, շինեցին այստքիկ մահտեսի
Ապրին, Ասլան էրէցն, ուստա Սինանն,
Խալըն, մահտեսի Չարան, Սինանն, Կա-
ղուպն, Պետրոսն, Կիրակոսն, Մաճարն, Թո-
րոսն, Տատուրն, Կիլիկն, Մուրատն, Փա-
շան, Պաղչին, Սինանն, Տատուրն, Կմիրզէն,
Ղուղլուշան, Կիրակոսն, Մարիամն:

Ահա այստքիկ են որք զրեցաք. եւս ա-
ռաւել տէրն մեր Յիսուս Քրիստոս զրեցէ
զանուանս նոցա ի զպրութիւն կենաց. միա-
համուռ այստքիկ են. միարան ամենեքեան լի
սրբիւ Աստուած ողորմի ասացէք. եւ Աս-
տուած ձեզ ողորմի. ամէն: Յոգն ողորմու-

Թեան ցողեցէ ի ոսկերս նոցա եւ բուռուցէ օրն վերջին եւ լսել տացէ գերանութեան բարբառն որ ասէ. Եկայք օրհնեալք հօր իմոյ: Մանաւանդ գրչի Անտոն իրիցուն հօրն աէր Ստեփաննոսին եւ մօրն Հռիփսիմէին եւ ամենայն արեան մերձաւորացն, ընթերցողաց եւ լսողաց եւ զողորմի ասող քրիստոնէից ողորմեա Քրիստոս Աստուած մեր ամէն:

Յարգա յայտնելոյ ջալարոցն եւ սաստիկ սովուն եւ մարդակեր գայլոցն եւ թաղաւորաց անհաշտ խռովութեանց եւ այլ եւս աւարառութեանց եկեղեցեաց այրմանցն զոր գրեւոց եմ ըստ տկար մտաց իմոց: Եթէ տէր կամենայ այլում ժամու պատմեցուք ի լսելիս ժողովրդեանս. ամէն: Ձկնի աւարտման ճառիս թէ ըլայրի տեսուք յիշատակ սուրբաց եւ կամ աշխատողաց հանգստեան շարականիս փոխ մի աւետարան եւ հոգեոց ասել մի ճանճրանայք ով հարք իմ եւ կըրարք. որպէս ասէ Տէրն, զի Արժանի է մշակն վարձու իւրոյ Ռ. յաւիտեանս ամէն: Հայր մեր:

ձառ Բ. Արպէս սկիզբն ճառիս յիշեցաք թէ ի ժամանակս սուլթան Մուրատին շինեցան եկեղեցիքս. այս Մուրատ թագաւորն ի՞նք. ամ թագաւորեալ մեռաւ եւ ետ սորա թվին ՊՂԹ (1450). թագաւորեաց սուլթան Մէհմէտ. սա էաւ Ստամպոլ. ՁԲ (1453) թվին եւ թագաւորեալ ամս ԼԱ. մեռաւ թվին ՁԼ (1481). թագաւորեաց սուլթան Պայագիան ամս ԼԱ եւ մեռաւ: Թվին ՁԿԱ. թագաւորեաց սուլթան Սէլիմն. սա էաւ զՏիարպէր. թվին ՁԿԵ (1516) զարձեալ էաւ զՇամ. թվին ՁԿԶ (1517):

Դարձեալ էաւ Մար. թվին ՁԿԷ. սա չարացաւ եւ արար առաջին տղաժողով քրիստոնէից: ՁԿԸ թվին եւ թագաւորեալ. ամս Թ մեռաւ: Թվին ՁԶ (1521) թագաւորեաց սուլթան Սիւլէյման. սա զնաց ի վերայ Պուտիմին. ՁԶԷ (1528) թվին եւ էաւ գնա. զարձեալ էաւ զՊագոտատ. ՁԶԸ (1535) թվին. զարձեալ գնաց ի վերայ Բիջայ. ՌԺԷ (1568) թվին եւ անդ մեռաւ ի Սէյիտօվար. թագաւորեալ ամս ԽԵ: Եւ ետ սորա թվին ՌԺԸ (1556) թագաւորեաց սուլթան Սէլիմն. սա էաւ զԿիպրոս որ է Ղըրըրը. ՌԺԹ թվին. եւ թագաւորեաց. Թ. տարի: Եւ ետ սորա թագաւորեաց. ՌԻԴ թվին սուլթան Մուրատն. քանզի առաջին ճառին յիշեցաք թէ Օսմանցոց իշխանութիւնն ձգեցաւ յարեւելս կոչս որ է Պարսկաստան. այս թագաւորս Մուրատ առաւել արիացաւ եւ տիրեաց ի Թէվրուզ եւ

Երեւան, ի Կէնձէ եւ զԱրաշ. զՇամախի մինչեւ ի դուռն Ալանաց. ԺԵ տարի հեծելաշարժէն քուլլու աշխարս աւերեցաւ:

Ընդ այն ժամանակն էր թագաւորն Պարսից. շահ Աբրազ դեռ նորընծայ եւ առաքեաց զեւսպանս հանդերձ զանազան ընծայիւք. եւ եղպորն իւր պատանդս որ է ըռէհին առ թագաւորն Մուրատ. վասն հաշտութեան. զէրէ այնչափ երկուցեալ էր մինչ զի զթախտըն վերուց ի ըլսպահան քաղաքէ եւ տարեալ ի ներսին Սորասան եւ անդէն առաքեաց զէլչիսըն. եւ թագաւորն ընկալաւ զնծայսն եւ արար հաշտութիւն. եւ խաղաղացաւ երկիրն ամենայն ողորմութեամբ Աստուծոյ: Սա թագաւորեաց ամս. Ի. եւ ետ սորա թվին ՌԽԴ. թագաւորեաց սուլթան Մէհմէտ ամս. Ժ. ի սորա ժամանակն բազում քաղաք եւ երկիր աւերեցաւ զի ոչ կարէր վարել զթագաւորութիւնն ծառայքն եւ պարոնայքն ամենեքեան ապստամբեցան եւ երես դարձուցին ի նմանէ. քանզի ինքն միայն ոչ էր իշխանաւոր. որ ժամ տայր զբազաք մի փաշայի միոյ. ետ տանն աւուր կամ քսան աւուր մայրն կամ քոյրն կամ իւր կինն կամ վէզիրն տային այլոց փաշայի եւ առնուին զբազում կարմիր դահեկան. զՀամիլ որ է Տիարպէր. Ձ. ամսոյ մէջ. Թ. փաշայի ետուն. եւ եկեալ փաշայքն կամ մուսէլիմն, զիտէին որ բանի յետքն փուշ է նոքա այլ սկսանէին ի կողոպտել եւ ի թալնել զքաղաքն եւ երկիրն. ահա այսպիսի կերպիւ ամենայն քաղաքն կամ գեղորայքն եւ զինչ երկարեցից ոչ կարեմ գրով պատմել զաւեր աշխարհս տէրութեան Օսմանցոց ի ձէլալոց բազմութեան, քանզի ցանցրութիւն համարեցայ անուանէ զբել զձէլալիքն: Եւ ի սոցա պատճառէ կզիւ սով սաստիկ թվին. ՌԾԵ (1606) էն մինչեւ ՌԾԹ (1610). այս ի մէջ երկուց մեծաց ծովուցն՝ այսինքն սպիտակ ծովուն եւ սեւ ծովուն ի մերձակայ գաւառացն Ստամպոլէն մինչեւ ի գաւառն Թէրուզի ի Բաղատաէն մինչեւ ի Տէմուր զափուն այսքան եզերաց մէջն եղեւ ահաքին սովն որ մարդ զմարդոյ միան կերան. այլ եւ զշունս եւ զկատուս եւս: Ահա գրեալ եմ ովկիանոսէն կաթիլ մի թէ կամիք մի ըստ միով իմանալ ով կըրարք իմ զԱռաքելապատմագիրն կարդա. եւ զանպիտանս իշեա:

Եւ ել համբաւս այս մինչեւ ի շահ Աբրազ թագաւորն պարսից. եւ ինքն եւս լրտեսեաց եւ իրրեւ ստուքեաց զաւերն եւ զանժարա-

նութիւնն Օսմանցոց. եւ ելեալ բազում զօրօք ի թվին ՌԾԲ. եւ եկեալ տիրեաց զքաղաքան զոր օսմանցիկն առեալ էին. եւ բազում օճիւս զորձեաց զանազան կերպիւ քանզի. Լ. զոնախ լայնութիւն եւ Լ. երկայնութիւն երկրիս զմարդիքն քեալ տարաւ. եւ զգահան եւ կարասիքն հրով այրեաց. քանզի զայս հնարս արար աշխարհաւեր շահ Աբրազ. զի մի եկեալ Օսմանցոց զօրքն յախդեցին ինքեան. զայսպիսի եւ այլ անպատմելի նեղութիւնս կրեցին մանաւանդ ողորմելի ազգս Հայոց. քանզի էջմիածնայ եկեղեցիքն քայքայեալ աւերեցան եւ կղեւ բնակութիւն գազանաց անասնոց եւ թռչնոց ի բազում ժամանակս: Ահա այս ամենայն կղեւ վասն մեղաց մերոց եւ դուք հարք իմ եւ կըրարք մի ցանցրանայք կարգալոյ եւ լսելոյ. եւ զաշխատողս մի մեղադրէք. այսուհետեւ դարձուցուք զբանս մեր ի գործս կոնդակիս:

Կոնդակ Բ. Ահա դարձեալ գրեցուք զթուականս ՌԾԲ. զայն վերոյգրեալ ձէլալոյն միջէն անիծեալ հասան պէկ անուռն ձէլալի եկեալ է աստ քաղաքս քթթահիւս եւ այրեալ է զքաղաքս եւ Բ. եկեղեցիքն ի հետ այրեցան զսուրբ Աստուածածինն եւ զսուրբ Թորոսն: Քրիստոնեայքն ետոյ ժողովեցան ողորմութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցին, սր են այսօրէիկ. նախ տէր Դաւիթին տղան պալին. Ռ. ստակ եւ այլն: Միահամուռ ահա այսօրէիկ են կըրարք. լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի եւ փոխանակ զայս ձեռագործ տաճարիս աշխատեք են թէ արդեամբք եւ թէ այլ կերպիւ աշխատաւորաց տացէ նոցա տէր Աստուած զանձեռագործ խորան եւ զբեցէ զանուանս նոցա ի զպրութեան կենաց ամէն: Ի թվին ՌԶԲ. եկն աստ Սերաստացի Մելքիսեթ վարդապետն եւ աստ վախճանեցաւ. եւ ամփոփեալ թաղեցինք ի գաւիթս եկեղեցոյ եւ ետոյ եկեալ ասկականք սորա ետուն յիշատակ սուրբ Աստուածածնայ. Ա. փիլոն Ա. խալի. Ա. սաղաւարտ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք: Աստուած ողորմի Թորոսի հոգւոյն ետ. Մ. ստակ եւ այլն: Այսչափս բաւականացի եւ զմնացեալն այլում ժամու կարդացուք թէ տէր կամեցի. ի լսելիս ժողովըրդեանն: Որ ողորմի Քրիստոս Աստուած զայս յիշատակին տուողաց եւ զբեցէ զանուանս նոցա ի զպրութեան կենաց. եւս առաւել որ աստ ժողովեալ հարցք եւ կըրարք:

Մանաւանդ մեղաւոր եւ անարժան եւ ամենայն բարեաց թափուր գրչի Անտոն իրիցուն հօրն աէր Ստեփաննոսի եւ մօրն Հռիփսիմէին եւ ամենայն արեան մերձաւորացն ընդերձողաց եւ լսողաց եւ զողորմի ասողաց ողորմեա Քրիստոս Աստուած մեր. ամէն: Ձկնի աւարտման ճառիս թէ արժան տեսուք յիշատակ տուողիս եւ կամ աշխատողիս հանգստեան շարականիս. եւ փոխ մի աւետարան եւ հոգոց ասել մի ցանցրանայք: Յաւիտեանս ամէն. հայր մեր որ յեր'':

ՊԵՏԱՊՈԼԻՏԻՆ ԼԵՁԱՐԱՆԻ ՏՈՒՄԻ
(ԿԵՆՍՍՏԱՆԿԱՆ ՈՒՐՈՒՄԻՆԻՍԻՆԻ)
Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս
Աշխատասիրեց' ՅՈՂԱՅԹ ԹԱՅԵՈՍԵԱՆ
(Շարունակութիւն):

ԳԼՈՒՆ Ը.

ԳՆԴԱՊԵՏ ՂԱԶԱՐ ՅՈՂԱԿԵՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ 1

Յովակիմ Ղազարեան Լազարեանցի կրտսեր որդին էր՝ գնդապետ Ղազար Լազարեանցը:

Սրա անունը սերտօրէն կապուած է 1827—1828 թթ. ռուս-պարսկական եւ մասամբ էլ ռուս-տաճկական 1829 թ. պատերազմներին հետ եւ մասնաւորապէս 40.000 պարսկահայերի զաղթի հետ դէպի «Հայկական նահանգը»:

Մ. Մսերեանը եւ Պրոֆ. Չինովեւը գրեթէ տեսութիւններ չեն տալիս նրա անձնական կեանքի մասին. չեն հաղորդում անկամ նրա ծննդեան ու մահուան թուականները...

Նրա շատ համառօտ ծառայութեան ցուցակից եւ կայսերական հրովարտակներից մենք իմանում ենք միայն հետեւեալը.

¹ Այս կենսագրականը կազմելիս մենք օգտուել ենք զԼեւոնորայէս ա. «Նկարագիր Գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», 1832: Ի Մոսկով: Ի տպագրատան Հայկական ձեռարանի Տեղաց Լազարեանց, էջ 104:
Բ. Մ. Մսերեանց, «Յիշատակարան» եւ այլն: Հեղինակի տեղեկութիւնները գրեթէ ամբողջովին բացում են մեր առաջին աղբիւրից:
Գ. Վ. Պոստո, «Վերածնութիւն Հայաստանի», Պարիս 1904:
Դ. Ա. Երիցեան, «Կովկասացի» եւ այլն: